ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՂՀ ֆինանսների նախարարության 2017 թվականի մարտ ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2017 թվականի 1-ին եռամսյակում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 6473.8 մլն դրամ՝ պլանավորված 6000.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 7.9 տոկոսով կամ 473.8 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 8.8 տոկոսով կամ 526.1 մլն դրամով:

Մարտ ամսում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 2771.0 մլն դրամ՝ պլանավորված 2541.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 9.1 տոկոսով կամ 230.0 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 8.6 տոկոսով կամ 219.6 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 108 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 3 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 26 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել է 102.4 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ: Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 141 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 65-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 36-ը՝ ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների չափագրման, 19-ը՝ հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի հիմնավորվածության, 5-ական՝ ակցիզային դրոշմանիշների շարժի, դրոշմավորման կանոնների պահպանման ու պիտանիության ժամկետը լրացած ապրանքների դուրսգրման գործընթացի և 11 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ավարտվել է 7 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 1.0 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 141 վարչական գործով սահմանվել է 1.7 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 6502 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 5705:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 100 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 13 վարձու աշխատողի՝ 1.3 մլն դրամի չափով:

2017թ. փետրվարի 1-ից ուժի մեջ մտած «Հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ԼՂՀ օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով կազմվել են հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ ունեցող հարկ վճարողների ցանկերը և ներկայացվել ժամանակացույցերի կնքման և օրենքով նախատեսված արտոնություններից օգտվելու հնարավորությունների վերաբերյալ անհատական իրազեկումներ: Ապրիլի 1-ի դրությամբ անհատական իրազեկումներ ստացած հարկ վճարողների թիվը կազմել է 3546 հարկ վճարող:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 41 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Հաշվետու ամսում ԼՂՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «Աշխատողի աշխատանքի ընդունումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) և (կամ) նոր աշխատողի համար սահմանված ժամկետում գրանցման հայտ չներկայացնելու փաստն արձանագրելու կարգն ու արձանագրության ձևը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 31-ի N 538-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման նախագիծը:

Բարեխիղճ ու կարգապահ հարկ վճարողներին խրախուսելու, հարկ վճարողների ինքնագնահատման համակարգը ամրապնդելու նպատակով ԱՀ

ֆինանսների նախարարի 2017 թվականի մարտի 7-ի N 89 հրամանով ներդրվել է օրինապահ հարկ վճարողների ցանկերի ձևավորման կարգը:

Ֆինանսների նախարարի հրամաններով հաստատվել են նաև «Մի շարք հաշվետվությունների ու տեղեկանքների ձևերը, դրանց լրացման կարգերը և հարկային մարմին ներկայացման ժամկետները», «Եկամտային հարկի գումարների վերադարձման համար նախատեսված դիմումի և եզրակացության ձևերը», «Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի կանոնակարգը», ««Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքի 9.1-ին հոդվածի 4.1-ին մասի պահանջները բավարարելու մասին հայտարարության ձևը», փոփոխություններ և լրացումներ կատարվել «Եկամտային հարկի հաշվարկի» ձևում և «Հարկային մարմնի կողմից հավաքագրվող հարկատեսակների և այլ պարտադիր վճարների հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման համակարգի ներդրման ժամանակացույցում»:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում նախարարության օպերատիվ հետախուզության և հայցային աշխատանքների կազմակերպման գործառույթ իրականացնող ստորաբաժանումների երկու աշխատակիցներ մասնակցել են ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

Հաշվետու ամսում ԱՀ ֆինանսների նախարարության պատվիրակությունը՝ նախարարի տեղակալի գլխավորությամբ, գործուղվել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ համագործակցության միջոցառումների ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքի քննարկման նպատակով:

ՀՀ և ԱՀ հարկային մարմինների միջև իրականացվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

2017 թվականի 1-ին եռամսյակում հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել են 712 տնտեսավարող սուբյեկտների ընդունելություն, որոնց արդյունքում պարզաբանվել են վերջիններիս հուզող հարցերը:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 375, ելքագրվել՝ 129 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 5 գրություն, որից 2-ը՝ «Skype» հեռաձայնային ծառայության միջոցով: